Հովհաննես Թումանյան

Թումանյանը քառյակների մասին

- Քառյակները շատ ուժեղ շտրիխներ են, դրանք իմ հոգու կենսագրությունն են:
- Քառյակները հասուն շրջանի արդյունք են՝ իմաստության, վեհության:
- Քառյակները շատ նուրբ, ազնիվ, խորը և գեղեցիկ բաներ են:
- Քառյակները մեղմ են, քնքուշ, խորը, շատ սեղմ ու բովանդակալից:
- Քառյակը գոհար է և անպայման հղկված պետք է լինի:
- Քառյակը պոեզիայի մինիատյուրն է, նուրբ ճաշակի բան: Քառյակները պետք է կարդալ հանգիստ ու ծանր և ամեն մարդ չի կարող հասկանալ, գնահատել: Մարդիկ կան, որ քառյակները ոտանավորի նման են կարդում. պարզ տեսնում ես, որ չի հասկանում թե ինչ բան է քառյակը: